


է հաւատքի և նուիրական դատի մը մաքուր համոզումը միայն :
Իսկ հասկնալու համար Մկրտէթեան որմանկարը , պէտք
է կարենալ մտապատկերել Հրէաստանի անսպասելի մէջ վայ-
րի մեղրով ու մարախով մնած տեսանողը , որուն հոգւոյն մէջ
մեծ թուականի մը առաւօտն է ծաթած . . . :

Կեանք և անկեղծութիւն կայ այս պատկերներուն մէջ .
մեռած դէմքերու շարքուած գեղեցկութիւնը չէ որ կ'ցուցա-
դրեն այս գիծերն ու գոյները , այլ իսկական հայ արուեստի



(թիւ 52) Աղեղաձայր զարդանկար

նկարներու , որոնց մին ժ.Ա. դարուն գծուած , կ'մնայ տա-
կաւին Վերին Նգիպատի մէջ , Աստանի մօտ կիսականգուն
Ճերմակ Վանքի խորանին վրայ , և ուրիշներ՝ բիւրաւոր մա-
գաղաթնուած մէջ , որոնք հին հայկական գեղարուեստի գան-
ձը կ'պահպանեն տակաւին ցայսօր էջմիածնի՝ Երուսաղէմի՝